

ՆՈՐ ՏԱՐԻՆ

Մենք անպիտան ծառաներ
ենք, քանզի ինչ որ պարտական
էինք ընելու, ըրինք (Ղուկ. ԺԷ, 10):

Նոր Տարին, կը թեւակոխենք հաւատով, յոյսով եւ յանձնառութեամբ: Ան կը բանայ մեր առջեւ գործունէութեան նոր դաշտեր: Անցնող տարին տարաւ մեր կեանքէն մաս մը: Նորը պարտինք մտնել մեր պարտաւորութիւններու գիտակցութեամբ:

Ամէն անհատ, այս կեանքին մէջ, պարտաւորութիւններ ունի իր անձին, իր ընտանիքին, իր շրջապատին, իր ազգին, մարդկութեան եւ Աստուծոյ հանդէպ: Մեզի յանձնուած գործը պէտք է կատարենք ամենայն խղճմտութեամբ եւ հոգածութեամբ: Պէտք է դասալիք ըլլանք մեր պարտաւորութեանց մէջ: Հարցը, բարձր դիրքեր, պաշտօններ գրաւել չէ, այլ իր գործը լիովին կատարել: Պարզ բանուոր մը, որ պարտաւանճութեամբ կը կատարէ իր պաշտօնը, աւելի հանելի, ընդունելի է Աստուծոյ առջեւ, քան անպատասխանատու անձ մը բարձր դիրքերու վրայ:

Մեր Աստուածային Տիրոջ կեանքը եղաւ ծառայութեան եւ սիրոյ արարքներու շարան մը: Իր մէջ չենք տեսներ, եսասիրութիւն, ամբարտաւանութիւն: Իր բոլոր արարքներուն մէջ, կը ցոլանայ ծառայութեան եւ սիրոյ ոգին: Անձնագոհ մարտիրոսներ, սուրբեր, պատմութեան էջերը լուսաւորեցին, իրենց մարդասիրական, այլասիրական նուաճումներով: Անոնք ազատագրեցին մարդոց հոգիներէն եսի եւ մեղքի կապանքները եւ գերադասեցին հոգեւոր եւ բարոյական արժէքները նիւթականէն: Ապրելով հանդերձ նիւթական աշխարհի մէջ, սուրբերը գերիները չեղան նիւթին, հանոյքին եւ ազահութեան: Անոնք

իրենց գերագոյն գոհունակութիւնը ունեցան հոգիի ազնուութեան եւ ծառայութեան մէջ:

Անցնող տարուայ ընթացքին, քրիստոնէական սիրոյ լաւագոյն օրինակներէն մին էր Մայր Թերեզան, որ իր անխոնջ անձնուէր նուիրումով՝ անկեալներու, հիւանդներու, լքեալներու, մարդկային կեանքի լուսանցքի վրայ ապրողներու հանդէպ, եղաւ տիպար օրինակը քրիստոնէական օժանդակութեան:

Նիւթի երկրպագուները, իրենց կեղծ ազատութեան շպարներով, մարդկութիւնը կ'առաջնորդեն դէպի անյագ նիւթապաշտութիւն, անտեսելով հոգեւոր եւ բարոյական արժէքները: Հարկ է որ, քրիստոնեան ունենայ ամուր կեցումով, հաստատ համոզում, չտարութեան զարմանազան հոսանքներէն:

Առաջին դարու քրիստոնեաները ունէին անսասն հաւատ, վեհ բարոյական, այդ էր իրենց գերագոյն ուժը:

Պատմութեան ընթացքին, քրիստոնէութիւնը դիմագրաւեց շատ մը մարտահրաւերներ, եւ այսօր ալ, շնորհիւ իր աստուածային հոգեւոր ուժին, պէտք է ցոյց տայ իր բարոյական գերակայութիւնը: Քրիստոսի խօսքերը, կենսատու են եւ վերանորոգիչ:

Քրիստոս մեզ հոգեպէս հզօրացուց, մեղքի բոլոր նիւղաւորումներուն դէմ: Ներկայ դարուն, մեր երիտասարդներուն մէջ, պէտք է դրոշմենք ծառայութեան ոգին իբրեւ պարտականութիւն, պատասխանատուութեան գիտակցութիւն: Ճիշդ է որ, մարդկային մտքի նուաճումները

գիտական աշխարհին մէջ, գովելի եւ օգտակար, անոնց համընթաց նաեւ ջանադիր պէտք է ըլլան մեր բարոյական անումին.

Կ'ապրինք արագ փոխուող աշխարհի մը մէջ, հարկ է որ, այդ արշաւին մէջ, ամուր պահենք մեր քրիստոնէական սկզբունքները: Մարդիկ, պէտք ունին այսօր հոգեպէս վերանորոգուելու, նաեւ Քրիստոսի պատգամով դառնալու նոր արարածներ:

Պատմութեան մէջ, պայքարը շարունակուեցաւ խաւարի եւ լոյսի որդիներուն միջեւ, հակառակ խաւարի ուժերու երեւութական յաղթանակին, վերջին

եւ տեւական յաղթանակը լուսոյ որդիներունն է: Թող մեր գործունէութիւնները՝ գեղուն ըլլան քրիստոնէական Սիրոյ եւ ծառայութեան ոգիով:

Անցնող տարեփակին եւ Նոր Տարուայ սեմին կանգնած, աղօթեմք որ բարձրեալն Աստուած, ուժ եւ կարողութիւն շնորհէ, Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր, Տ. Թորգոմ Արք. Մանուկեանին, եւ Միաբանութեան անդամներուն եւ մեր համայն ժողովուրդին, որպէս զի իրագործուին մեր ազգային եւ կրօնական ծրագիրները, մեր ամբողջ ազգին պարգեւելով երջանկաբեր եւ արդիւնաշատ տարի մը:

ԱՆՈՒՇԱԿԱՆ Ծ. ՎՐԴ. ԶՂՋԱՆԵԱՆ

Աղօթք Սբ. Փրանկիսկոս Ասիզացւոյ

Տէ՛ր,

Դարձուր ինձ Զու խաղաղութեանդ գործիքը,

Որ սէր բերեմ հոն՝ ուր ատելութիւն կայ,

Որ հաշտութիւն բերեմ հոն՝ ուր վիրաւորանք կայ,

Որ միութիւն բերեմ հոն՝ ուր հակառակութիւն կայ,

Որ հաւատ բերեմ հոն՝ ուր կը տանջէ տարակոյսը,

Որ ճշմարտութիւն բերեմ հոն՝ ուր կ'իշխէ սխալը,

Որ յոյս բերեմ հոն՝ ուր կը սպառնայ յուսահատութիւնը,

Որ ուրախութիւն բերեմ հոն՝ ուր կը շատնայ

տխրութիւնը,

Որ լոյս բերեմ հոն՝ ուր կը թագաւորէ խաւարը:

Տէ՛ր,

Օգնէ ինձի, որ չունենամ կարիք ու չխնդրեմ

մխիթարուիլ, այլ՝ մխիթարել,

հասկցուիլ, այլ՝ հասկնալ,

սիրուիլ, այլ՝ սիրել:

Որովհետեւ՝

Ով որ կու տայ՝ կը ստանայ,

Ով որ կը ներէ՝ անոր պիտի ներուի,

Ով որ կը մեռնի՝ պիտի ծնի յաւիտենական կեանքին

համար:

Ամէն: